Մրտամբ ապա նաւն անցամբ.
Դամբէժու մօտ տեղ հասամբ.
Հայաստանի սիրարկուն
Հուտով դարձաւ տէր տուն.
Ինքնիրենս այս ուխտեցի,
Դէպ ի Թէհրան չըւեցի.
Որ յետ գործս աւարտեցի,
Բաղդիս վազեմ փրրկելոյ,
Ամլ որչափ ջան դրի ի գործ,
Յաջողուածոյ չառի փորձ.
Ցանկարծ մի օր միտքս եկաւ,
Որ բաղդս իմ հետ չէ բընաւ.
Մրտածէի երբ ի խորհ,
Տեսայ հեռուն քրրտնաթոր,
Երկու անձինք փաթրթուած,
Ջիրար կուղեն զարնել ցած.
Գոռում գոչում աղաղակ,
Երկնից եղած նըշաւակ,
Բաղդս էր մէկն, իսկ միւս մէկ,
Հայաստանի ՈԳԻՆ հէգ.
Արդեօք սորանց վէճն ի՞նչ է.
Ջիս ի նմանէ պահանջէ.
Նորանք և զիս տեսնելով,
Դադարեց վէճըն փութով.
Բաղդս գոչեց վառ ի խանդ,
Թէ չեմ այլ ես քո պատանդ,
Ահա որդիդ տարագնաց
Մկրտիչ Յակոբ Բրժըշկեանց.

1873 Ապրիլ 15
Ի Թէհրան:

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՄԱՏԹԷՈՍ ԵՐԵՑՓՈԽԵԱՆՑ

Նոր-Նախիջեւանցի Մեծապատիւ Պ. Մատթէոս Խաչատուրեան Երեցփոխեանց՝ ի պէտս եւ ի զարդ Աւագ Սեղանոյ Ս. Տաճարիս Էջմիածնի՝ երկու հարիւր ռուբլի արժողութեամբ՝ ապծաթեայ՝ միջակադիր մի գեղեցիկ ջահ ընծայեց:

Կգովեմք յիշեալ ազնիւ մերազնէի բարեպաշտական եռանդը եւ իղձը ի պայծառութիւն Տան Տեառն, եւ հրապարակաւ կայայտնեմք մեր երախտագէտ զգացմանց հաւաստիքը:

ՊԱՐՈՆԱՑՔ ԴԱՒԻԹ ՊՕՊՈՎԵԱՆՑ ԵՒ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՊԱՇԵԱՆՑ.

Ստավրապօլեցի Մեծ. Պ. Դաւիթ Բարդուղիմէոսեան Պօպովեանց՝ ներկայ տարիէն սկսեալ՝ եւ այժմէն յինսուն ռբլ. նուիրելով՝ (տարեկանն եւս յիսուն ռբլ. լինելով), եւ Եյսկեցի Մեծ. Պ. Մանուկ Թորոսեան Սուպաշեանց՝ յառաջակայ 1876 թուականէն սկսեալ՝ տարեկան ԹՈՒ Ա ՀԻՆԳ ռուբլի՝ ի նպաստ նորակառոյց ձեմարանի Ս. Էջմիածնի ուխտած եւ խոստացած են յիւրաքանչիւր ամի ցվերջին շունչ կենացն՝ յիշեալ քանակութեամբք ընծայել տարեկան նուէրնէր:

Ցիշատակեալ ջերմեռանդ Հայազգեաց գովելի եւ բարենպատակ ուխտ եւ խոստմունքը հաղորդելով ի տեղեկութիւն եւ ի բարենախանձ ուրախութիւն մերազնեայց՝ նաեւ արժան կհամարիմք հրապարակաւ մեր խորին եւ երախտագիտական զգացմանց ի հաւաստիս՝ յատուկ շնորհակալութիւններ փոխարինել առ նոսա:

Ապրի՞ն յաւէտ ամենայն բարեսէր եւ ջերմեռանդ Հայերն: